Գործադիր օրինակ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության

և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև

Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ

Օժանդակության համաձայնագրի

Փոփոխություն 4

ԱՄՆ ՄԶԳ Օժանդակության Համաձայնագիր
սեպտեմբերի 27, 2013թ.

ԱՄՆ ՄԶԳ օժանդակության համաձայնագիր թիվ AAG-111-G-10-001

2010թ. օգոստոսի 6-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), և Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող) միջև Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ 2010թ. օգոստոսի 6-ին կնքված օժանդակության համաձայնագրի Փոփոխություն թիվ 4:

2010թ. օգոստոսի 6-ին Դրամաշնորհ ստացողը և ԱՄՆ ՄԶԳ-ը Օժանդակության Համաձայնագիր են կնքել Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի կայացումը խթանելու շուրջ՝ համաձայն նշված Օժանդակության Համաձայնագրի (Այսուհետ՝ Համաձայնագիր) Հավելված 1-ի (Գործունեություն):

Դրամաշնորհ ստացողը և ԱՄՆ ՄԶԳ-ը ցանկանում են փոփոխություններ կատարել Համաձայնագրում.

1) ավելացնել *Կրթություն* ծրագրային ոլորտը
2) ավելացնել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ընդհանուր հատկացված գումարի չափը $ 33 296 870,36-ից մինչև $42 471 190,18՝ այսպիսով տրամադրելով $9 174 319,82 լրացուցիչ ֆինանսավորում Համաձայնագրի ներքո ծրագրերի իրականացումը շարունակելու նպատակով
3) ավելացնել ընդհանուր հաշվարկված ԱՄՆ ՄԶԳ ներդրած գումարը $ 33 296 870-ից մինչև $43 705 488,18; և
4) երկարացնել Ավարտման Ժամկետը մինչև ԱՄՆ ՄԶԳ-ի նոր Երկրի Զարգացման Համագործակցության Ռազմավարության ավարտը, սեպտեմբերի 30, 2017թ

Գործադիր օրինակ

Այսպիսով՝ Համաձայնագրի կողմերը համաձայնում են Համաձայնագրում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. Բաժին 2.1.-ի *Գործառնական Նպատակը, Ծրագրային Ոլորտներ* փոխարինվում է հետևյալով.

Բաժին 2.1. -ի *Գործառնական Նպատակը, Ծրագրային Ոլորտներ*:

> Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության կողմից ԱՄՆ օտարերկրյա օժանդակության ռազմավարության մեջ նշված Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատված օժանդակության իրականացման նպատակը առավել ամրապնդելու և խորացնելու նպատակով Կողմերը համաձայնում են համագործակցել հետևյալ ոլորտներում. մասնավոր հատվածի զարգացում, ֆինանսական ոլորտի օժանդակություն, կրթություն, ենթակառուցվածքներ (այսուհետ՝ ծրագրային ոլորտներ, և, գործառնական նպատակի հետ համատեղ՝ Նպատակ):

2. Համաձայնագրի 3.1. (ա) պարբերության առաջին բաժինը ԱՄՆ ՄԶԳ ներդրումը փոխարինվում է հետևյալով.

> (ա) Դրամաշնորհ: Սույն Համաձայնագրով սահմանված Նպատակի իրականացմանն օժանդակելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն, համաձայն 1961թ. Օտարերկրյա օժանդակության որոշման, սույնով Դրամաշնորհ ստացողին է շնորհում քառասուներկու միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար հարյուր իննսուն ԱՄՆ դոլար և տասնութ ցենտ ($42 471 190,18) չգերազանցող գումար (այսուհետ՝ Դրամաշնորհ):

3. Համաձայնագրի Բաժին 3.1. (բ) "ընդհանուր նախատեսվող ներդրումը" փոխարինվում է հետևյալով.

> բ) ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր նախատեսվող ներդրումը. Նպատակի իրականացման համար: ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր հաշվարկված ներդրումը կկազմի քառասուներեք միլիոն յոթ հարյուր հինգ հազար չորս հարյուր ութսունութ ԱՄՆ դոլար և տասնութ ցենտ ($ 43 705 488,18), որը կտրամադրվի փուլ առ փուլ: Հաջորդող մասերը կախված կլինեն ԱՄՆ ՄԶԳ Նպատակի համար նախատեսվող գումարների առկայությունից, և ԱՄՆ ՄԶԳ կողմից կտրամադրվեն Դրամաշնորհ ստացողին վերջինիս գրավոր ծանուցում ուղարկելուց հետո: Կողմերը համաձայնում են, որ յուրաքանչյուր աճող գումարը կավելացնի 3.1-ին բաժնում սահմանված Դրամաշնորհի ընդհանուր գումարը, և, հետևաբար, կարող է ավելանալ 3.2-րդ բաժնում սահմանված Դրամաշնորհ ստացողի ներդրումը: Դրամաշնորհ ստացողը համաձայնում է գրավոր ծանուցումով տեղեկացնել ԱՄՆ ՄԶԳ-ին յուրաքանչյուր նման աճող ներդրման կապակցությամբ:

Գործադիր օրինակ

Հոդված 4: Իրականացման ժամկետը փոխարինվում է 2017 թ. սեպտեմբերի 30 –ով չեղյալ համարելով 2013 թ. սեպտեմբերի 30-ը:

5. Հավելված 1 (Ա)-ն "Ֆինանսական պլան" փոխարինվում է հետևյալով.

Նպատակը	Ծրագրային ոլորտ	Նախորդ հատկացում	Տվյալ փոփոխություն	Ընդհանուր հատկացում
Տնտեսական աճ	Աճի մակրոտնտեսական հիմք	2 905 000,36	-	2 905 000,36
	Առևտուր և ներդրումներ	4 132 922	-	4 132 922
	Ֆինանսական ոլորտ	4 878 948	1 420 600,82	6 299 548,82
	Մասնավոր հատվածի մրցունակություն	10 010 000	6 740 702	16 750 702
	Ենթակառուցվածք	6 970 000	63 017	7 033 017
	Շրջակա միջավայր	1 000 000	-	1 000 000
Մարդկային ռեսուրսների ներդրումներ	Առողջապահություն	3 100 000	450 000	3 550 000
	Կրթություն	-	500 000	500 000
	Առողջապահական, սոցիալական և տնտեսական ծառայություններ, Խոցելի բնակչության պաշտպանություն	300 000	-	300 000
ԸՆԴԱՄԵՆԸ		33 296 870,36	9 174 319,82	42 471 190,18

Գործադիր օրինակ

6. Բացի նշված կետերից Համաձայնագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ, ուժի մեջ են և վավերական:

Գործադիր օրինակ

Ի հաստատումն որի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը՝ յուրաքանչյուրն ի դեմս իր կողմից լիազորված ներկայացուցչի, որոշեցին, որ սույն Համաձայնագիրը պետք է ստորագրվի իրենց անունից և պաշտոնապես հանձնվի վերը նշված ամսաթվին:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝

Վահրամ Ավանեսյան

Ամերիկայի Միացյալ Նահանգների
Կառավարության կողմից՝

Քարեն Ռ. Հիլիարդ

Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարար
Ամսաթիվ

ԱՄՆ միջազգային զարգացման
գործակալության տնօրեն
Ամսաթիվ

2010թ. օգոստոսի 6-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության՝ և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ կնքված օժանդակության համաձայնագրի Փոփոխություն թիվ 4